## <ՅՈՒՆԻԲԱՆԿ> ԲԲԸ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ
## 2023թ. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հարգելի բաժնետերեր և հյուրեր,

Թույլ տվեք ներկայացնել Ներքին աուդիտի 2023թ. հաշվետվությունը:

Տարեկան աշխատանքային ծրագրով Ներքին աուդիտն իրականացրել է մի շարք միջոցառումներ՝

### 1. Գլխամասային գրասենյակ

- 200 մլն դրամ և ավելի գումարի առևտրային վարկերի նպատակային ստուգում, այդ թվում դրանց դիմաց ձևավորված պահուստների արժանահավատության գնահատում:
- 100 մլն դրամ և ավելի գումարի հիփոթեքային և սպառողական վարկերի նպատակային ստուգում, այդ թվում դրանց դիմաց ձևավորված պահուստների արժանահավատության գնահատում:
- Վճարային տերմինալների լիցքաթափման գործընթացի գնահատում և կանխիկ գումարի ստուգում:
- Ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձ հաճախորդների հաշիվների ստուգում:
- Բանկի գործունեության՝ ՀՀ Կենտրոնական բանկի թիվ 173-Ն <Տեղեկատվական անվտանգության ապահովման նվազագույն պայմաններ> որոշման պահանջներին համապատասխանության ստուգում:
- Արտաքին աուդիտի հաշվետվություններում ներկայացված խնդիրների լուծման հետստուգում:
- Բանկային հաշիվների կենտրոնացված ռեեստր ուղարկվող հաշվետվությունների ուսումնասիրություն՝ ՀՀ Կենտրոնական բանկի Խորհրդի առ 28.09.2021թ. թիվ 143-Ն որոշման համաձայն:
- Բանկում իրականացվող գործընթացների՝ ՀՀ Կենտրոնական բանկի առ 04.11.2014թ. թիվ 300-Ն որոշմամբ հաստատված <ՀՀ տարածքում վճարային քարտի թողարկման, սպասարկման և տարածման, ինչպես նաև վճարային քարտով գործառնությունների իրականացման հետ կապված քարտապանների շահերի պաշտպանությանն ուղղված կանոններ սահմանելու մասին> կարգի դրույթներին համապատասխանության ստուգում:
- Գործընթացների FATCA պահանջներին համապատասխանության ուսումնասիրություն:
- Յունիբանկի համակարգում փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելմանն ուղղված միջոցառումների ստուգում և ներքին հսկողության համակարգի գնահատում:
- Պարգևավճարների հաշվարկման և վճարման ստուգում:
- Ներքին աուդիտի հաշվետվություններում ներկայացված խնդիրների լուծման հետստուգում:

## 2. Տարածքային ստորաբաժանումներ

Ընդհանուր առմամբ տարվա կտրվածքով համալիր ստուգման են ենթարկվել թվով 12 մասնաճյուղ, 10 մասնաճյուղերում կատարվել են ոսկու գրավով վարկերի նպատակային ստուգումներ, 39 մասնաճյուղերում կատարվել են դրամարկղային հանգույցների գույքագրումներ, ինչպես նաև բանկոմատների գույքագրում՝ թվով 67 Երևան քաղաքում և 29՝ մարզերում:

## 3. Արտապլանային ստուգումներ

Ներքին աուդիտը տարվա կտրվածքով իրականացրել է նաև արտապլանային աշխատանքներ, մասնավորապես՝

- Մոբայլ բանկինգ հավելվածով իրականացված փոխարկային գործարքների ուսումնասիրություն:
- Վարկերի վերաբերյալ քաղվածքների ուսումնասիրություն:
- Գյումրի մասնաճյուղում գործող երաշխիքների և վարկային պայմանագրերի ուսումնասիրություն՝ ըստ CRM համակարգում տեղադրված էլեկտրոնային փաթեթների:
- Վաղաժամկետ մարված վարկերի միջնորդավճարների վերահաշվարկի ուսումնասիրություն:
- <Բայլափթոփ> ՍՊԸ-ի կողմից մուտքագրված ապառիկ վարկավորման հայտերի ուսումնասիրություն:
- Ավանդի արժույթի փոփոխության հետևանքով կանխիկացման միջնորդավճարի գանձման ուսումնասիրություն:
- Վարկային գործիքների պայմանների ծրագրային ապահովման ուսումնասիրություն:

Արձանագրված խնդիրների վերացման ուղղությամբ ձեռնարկվում են մի շարք միջոցառումներ, մասնավորապես՝

– կազմվում է արձանագրված խնդիրների վերացմանն ուղղված միջոցառումների ծրագիր, նշանակվում են պատասխանատու անձինք / ստորաբաժանումներ և սահմանվում են կատարման ժամկետներ՝ 10-90 օր՝ ելնելով ռիսկի աստիճանից, արձանագրված խնդրի բնույթից,

– իրականացվում է արձանագրված խնդիրների վերացման նկատմամբ հետհսկողություն՝ դրանց կրկնությունը բացառելու և Բանկի կառավարման մարմինների որոշումների կատարումը ստուգելու նպատակով:

### Ներքին աուդիտի եզրակացությունը<br>ներքին հսկողության համակարգի վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի կողմից սահմանված ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմաններին <Յունիբանկ> ԲԲԸ-ի ներքին

հսկողության համակարգի համապատասխանության եզրակացության համար հիմք են հանդիսացել՝

- ✓ Բանկի Ներքին աուդիտի 2023թ. տարեկան աշխատանքային ծրագրի շրջանակներում իրականացված վերստուգումները, դրանց արդյունքում ներկայացված առաջարկությունների ապահովմանն ուղղված միջոցառումները,

- ✓ ընթացիկ վերահսկողության և տարեկան աշխատանքային ծրագրի շրջանակներից դուրս Բանկի Ներքին աուդիտի իրականացրած վերստուգումները, դրանց արդյունքում ներկայացված առաջարկությունների իրագործմանն ուղղված միջոցառումները,

- ✓ ՀՀ Կենտրոնական բանկի կողմից արձանագրված խնդիրների վերացմանն ուղղված ձեռնարկված միջոցառումները,

- ✓ արտաքին աուդիտի ստուգման արդյունքների հիման վրա <Նամակ ղեկավարությանը> փաստաթղթով ներկայացված առաջարկությունների կատարման վերստուգումները:

Բանկի ներքին հսկողության համակարգում արձանագրված խնդիրները ձեռնարկվող միջոցառումների արդյունքում լուծված են կամ գտնվում են կարգավորման փուլում, ինչը հիմք է տալիս եզրակացնելու, որ <Յունիբանկ> ԲԲԸ-ի ներքին հսկողության համակարգը համապատասխանում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից սահմանված ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմաններին:

**Ներքին աուդիտի տնօրեն**
**Արթուր Ղուկասով**
**19.04.2024թ.**

# ГОДОВОЙ ОТЧЕТ
# ВНУТРЕННЕГО АУДИТА ОАО “ЮНИБАНК” ЗА 2023г.

Уважаемые акционеры и гости!

Разрешите представить годовой отчет Внутреннего аудита за 2023г.

Согласно годовому плану Внутреннего аудита, были осуществлены следующие работы:

## 1. Центральный офис

- Целевая проверка бизнес кредитов на сумму 200 млн драм и более, в том числе оценка достоверности сформированных по ним резервов.
- Целевая проверка ипотечных и потребительских кредитов на сумму 100 млн драм и более, в том числе оценка достоверности сформированных по ним резервов.
- Оценка процесса разгрузки платежных терминалов и инвентаризация денежных средств.
- Проверка счетов клиентов физических лиц-нерезидентов.
- Проверка соответствия деятельности Банка требованиям, установленным решением Центрального банка РА N 173-Ն “Минимальные требования по обеспечению информационной безопасности”.
- Последпроверка на предмет устранения выявленных проблем, представленных в отчетах Внешнего аудита.
- Анализ отчетов, представляемых в централизованный реестр банковских счетов, согласно требованиям решения Совета Центрального банка РА N 143-Ն от 28.09.2021г.
- Оценка соответствия деятельности Банка требованиям, установленным решением Центрального банка РА N 300-Ն от 04.11.2014г. “О выпуске, обслуживании и распространении на территории РА платежных карт, а также об установлении правил по защите прав картодержателей при совершении операций по платежным картам”.
- Проверка процессов на предмет соответствия требованиям FATCA.
- Проверка мер по предотвращению отмывания денег и финансирования терроризма в системе Юнибанка и оценка системы внутреннего контроля.
- Проверка расчетов и выплат вознаграждений.
- Последпроверка на предмет устранения выявленных проблем, представленных в отчетах Внутреннего аудита.

## 2. Территориальные подразделения

В течение года была проведена комплексная проверка 12-и филиалов, в 10-и филиалах была проведена целевая проверка кредитов под залог золотых изделий, в 39-и филиалах была проведена проверка кассовых узлов, а также проверка банкоматов - в количестве 67-и штук в Ереване и 29-и штук - в регионах.

## 3. Внеплановые проверки

В течение года Внутренний аудит провел также внеплановые работы, в частности:

- Анализ операций по конвертации валюты в приложении Мобайл банкинг.
- Анализ выписок по кредитам.
- Анализ действующих кредитных договоров и договоров гарантий в филиале Гюмри по электронным досье в системе CRM.
- Анализ перерасчета комиссий по досрочно погашенным кредитам.
- Анализ заявок ООО “Байлаптоп” на получение pos-кредитов.
- Анализ взимания комиссий за обналичивание в результате изменения валюты депозита.
- Анализ программного обеспечения условий кредитных продуктов.

Для устранения выявленных нарушений предпринимаются соответствующие действия, в частности:

- составляется план мероприятий по устранению зарегистрированных нарушений, назначаются ответственные лица / подразделения и устанавливаются сроки устранения нарушений - 10-90 дней в зависимости от степени риска и характера нарушения,
- осуществляется последконтроль устранения зарегистрированных нарушений для исключения их повторения в дальнейшем и проверки выполнения решений органов управления Банка.

## Заключение Внутреннего аудита о системе внутреннего контроля

Основаниями для заключения о соответствии системы внутреннего контроля ОАО “Юнибанк” минимальным требованиям, установленным Центральным банком Республики Армения, являются:

- ✓ последпроверки, проведенные в рамках годового рабочего плана Внутреннего аудита за 2023г., мероприятия по реализации представленных рекомендаций,
- ✓ текущие и внеплановые проверки, проведенные Внутренним аудитом, мероприятия по реализации представленных рекомендаций,
- ✓ мероприятия по устранению проблем, зарегистрированных со стороны Центральным банком РА,
- ✓ последпроверки на предмет реализации рекомендаций, представленных в документе “Письмо руководству” на основе результатов проверки Внешнего аудита.

Выявленные в системе внутреннего контроля нарушения устранены в результате предпринятых мероприятий или находятся в процессе урегулирования, что служит основанием для заключения, что система внутреннего контроля ОАО “Юнибанк” соответствует минимальным требованиям по осуществлению внутреннего контроля, установленным Центральным банком РА.

**Директор Внутреннего аудита**
**Артур Гукасов**
**19.04.2024г.**